ՄՈՏՔԸ ՄԵՐ

ՍԵՄԻՆԱՐԱՇԱՐ՝ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ «ԼՈՒՅՍ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ

Բանախոսներ՝

ՊՐՈՖԵՍՈՐ ԴԵՅՎԻԴ ԿՐԻՍՏԱԼ և ՏԻԿԻՆ ՀԻԼԱՐԻ ԿՐԻՍՏԱԼ

ՇԵՔՍՊԻՐԱԲԱՐ

Աշխարհահռչակ լեզվաբան, պրոֆեսոր Դեյվիդ Կրիստալը Շեքսպիր է մատուցում: Իր տիկնոջ՝ Հիլարի Կրիստալի հետ միասին վերստեղծում է շեքսպիրյան մթնոլորտը՝ ներկայացնելով նրա պիեսներից հատվածներ՝ օրիգինալ արտասանությամբ, և հրավիրում է հանդիսատեսին՝ ճամփորդելու մեծ հեղինակի աշխարհով:

Հիլարի Կրիստալը մասնագիտությամբ խոսքի թերապևտ է: 1980-ականների կեսերից համագործակցել է Դեյվիդ Կրիստալի հետ: Դեյվիդի հետ համատեղ հրատարակել է մի քանի գիրք, այդ թվում՝ «Words on Words»-ը («Պենգուին» հրատարակչություն), և այժմ էլ մանկական գրքեր է գրում:

Դեյվիդ Կրիստալը՝ գրող, խմբագիր, դասախոս և հեռարձակող, աշխատում է տանից՝ Հոլիհեդ քաղաքից (Հյուսիսային Ուելս): Նա մեծ հռչակ է վայելում անգլերենի ուսումնասիրության իր գիտական աշխատանքների՝ առոգանություն և ոճաբանություն, ինչպես նաև կրոնական, կրթական և բժշկական համատեքստում լեզվաբանության կիրառության ուսումնասիրության շնորհիվ: Մասնավորապես խորացել է ախտորոշման և թերապևտիկ բուժման նպատակներով լեզվական դիտարկումների տեխնիկայում: Ներկայումս նա իր աշխատաժամանակի մի մասը նվիրում է լեզվի ուսումնասիրությանը, իսկ մյուսը՝ համացանցային ծրագրերին:

Դեյվիդ Կրիստալի հեղինակած գրքերը մեծապես առնչվում են լեզվին, այդ թվում՝ «Պենգուին» հրատարակչության մի քանի գրքեր: Սակայն նա առավել հայտնի է իր երկու հանրագիտարաններով «Քեմբրիջ Յունիվերսիթի Պրես»-ի համար՝ «Լեզվի՝ Քեմբրիջի հանրագիտարան» և «Անգլերեն լեզվի Քեմբրիջի հանրագիտարան»: Նրա վերջին գրքերն են «A Little Book of Language»-ը և «Begat: the King James Bible and the English Language»-ը (2010 թ.), նաև ինքնակենսագրությունը՝ «Just a Phrase I'm Going Through» (2009 թ.):

Դեյվիդ Կրիստալը եղել է որոշ ռադիո և հեռուստատեսային նախագծերի ու շարքերի խորհրդատու, մասնակից կամ հաղորդավար: Ներկայումս նա Անգլերենը որպես օտար լեզու դասավանդողների միջազգային ասոցիացիայի (IATEFL) և Լեզվի ուսուցման ասոցիացիայի (ALL) հոգաբարձուներից է, Մեծ Բրիտանիայի Ազգային գրագիտության ասոցիացիայի նախագահը, Լոգոպեդների թագավորական քոլեջի, Լեզվաբանների ինստիտուտի և Խմբագիրների ու սրբագրիչների հասարակության պատվավոր փոխնախագահը: Նաև եղել է Բրիտանական խորհրդի գլխավոր կազմի և Անգլախոսների միության անդամ: 1995 թ. Դեյվիդ Կրիստալը Թագուհու կողմից արժանացել է Բրիտանական Կայսրության գերազանցության շքանշանի (OBE) անգլերենին մատուցած ծառայությունների համար: 2000 թ. դարձել է Բրիտանական ակադեմիայի անդամ: Ներկայումս բնակվում է Հոլիհեդում, ուր «Իխելդրե» արվեստի կենտրոնի և ցուցասրահի տնօրենն է:

ՄՈՒՏՔՆ ԱԶԱՏ Է

2012 թ. հոկտեմբերի 8-ին՝ ժամը 18:00-ին, Հայաստանի ամերիկյան համալսարանի «Մանուկյան» սրահում

(Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 40)

Լույս Luys

AMERICAN UNIVERSITY OF ARMENIA ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

BRITISH COUNCIL